Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-34.1-Մ2-42 Գլխավոր մասնագետ(2023-11-28)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն | Պետական ծառայության համալրման բաժին | Գլխավոր մասնագետ, (27-34.1-Մ2-42)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փ. 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է ծառայողներին՝ ոստիկանության ծառայողներին, փրկարար ծառայողներին, ինչպես նաև հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնի նշանակելու, պաշտոնից ազատելու, կոչումներ շնորհելու, խրախուսում և տույժ կիրառելու, ինչպես նաև ծառայությունից տեղափոխման, փոխադրման, ռոտացիայի հետ կապված գործընթացների իրականացումը և պայմանագրերի գործողության ժամկետների հսկողության պահպանումը.
2. իրականացնում է ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների նախապատրաստումը, կազմակերպումը, անցկացումը և արդյունքների հրապարակումը, Նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ղեկավարների ընտրության (նշանակման) համար անցկացվող մրցույթների նախապատրաստումը, կազմակերպումը, անցկացումը և արդյունքների հրապարակումը.
3. իրականացնում է ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների վերաբերյալ հայտարարությունների նախապատրաստման և Նախարարության, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջերում հրապարակման աշխատանքները.
4. իրականացնում է ծառայողների և աշխատողների հաշվառումը.
5. իրականացնում է համապատասխան ծառայության անվանացանկերի կազմման, պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.
6. իրականացնում է սահմանային տարիքը լրացած և ծառայությունը շարունակելու ցանկություն հայտնած ծառայողների ծառայության ժամկետի երկարաձգման մասին համապատասխան գործընթացի կազմակերպումը և հրամանների նախագծերի նախապատրաստման աշխատանքները.
7. իրականացնում է ծառայության ընդունված (անցած) ծառայողների զինվորական հաշվառում.
8. իր իրավասության շրջանակներում իրականացնում է անհրաժեշտ տվյալների մուտքագրում և փոփոխում համապատասխան տեղեկատվական հարթակում:

Իրավունքները.

- պաշտոնի նշանակելու, պաշտոնից ազատելու, կոչումներ շնորհելու, խրախուսում և տույժ կիրառելու հրամանների նախագծերի նախապատրաստման համար Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներից և ենթակա մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, միջնորդություններ, զեկուցագրեր, դիմումներ, բնութագրեր և հիմնավորումներ.
- թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների նախապատրաստական աշխատանքների կազմակերպման, անցկացման համար Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներից, Ենթակա մարմիններից, Ենթակա կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղակատվություններ և հիմնավորումներ.
- մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիներից պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր.
- պահանջել և ստանալ համապատասխան տեղեկատվություն ծառայողների և աշխատողների հաշվառումն իրականացնելու նպատակով:

Պարտականությունները.

- նախապատրաստել և Բաժնի պետին ներկայացնել ծառայողներին՝ ոստիկանության ծառայողներին, փրկարար ծառայողներին, ինչպես նաև հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնի նշանակելու, պաշտոնից ազատելու, կոչումներ շնորհելու, խրախուսում և տույժ կիրառելու մասին Նախարարի և գլխավոր քարտուղարի հրամանների նախագծերը.
- պատրաստել համապատասխան ծառայության անվանացանկերի կազմման, պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ և տրամադրել Բաժնի պետին՝ համապատասխան Բաժնին ներկայացնելու նպատակով.
- ստուգել պայմանագրերի, համաձայնագրերի, սահմանային տարիքը լրացած և ծառայությունը շարունակելու ցանկություն հայտնած ծառայողների ծառայության ժամկետները և սահմանված ժամկետներում կատարել համապատասխան աշխատանքներ.
- նախապատրաստել և անցկացնել ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար Նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ղեկավարների ընտրության (նշանակման) համար անցկացվող մրցույթները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջերում հրապարակել դրանց արդյունքները.
- ներկայացնել տեղադրված նյութերի ամբողջական լինելու և ճշգրտության վերաբերյալ եզրակացության փաստաթղթեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթին մասնակցելու դիմած քաղաքացիներից ստացված փաստաթղթերի, օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու մասին.
- թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթին մասնակցելու դիմած քաղաքացիներին և ծառայողներին տրամադրել խորհրդատվություն օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.
- կատարել ծառայողների, աշխատողների և ծառայության ընդունված (անցած) ծառայողների զինվորական հաշվառումները.
- իր իրավասության շրջանակներում մուտքագրել և փոփոխել անհրաժեշտ տվյալներ համապատասխան տեղեկատվական հարթակում:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն**:**

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կադրերի և մասնագիտական կողմնորոշման բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Փոփոխությունների կառավարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: